Կարծում ենք, այդ թվականը պետք է ուղղել ՈԿԳ(663), այսինքն մեր տոմարի 1214 թ., որ Աբասի որդի Գրիգորի առաջնորդության ժամանակին է համապատասխանում։ Այստեղ միայն մի անհամապատասխանություն կա, այդ այն է, որ Զաքարեն այդ թվականից երկու տարի առաջ, հայոց 661 (1212) թվականին արդեն մեռել էր և թաղվել Սանահնում։ Սակայն, երևում է, որ հրովարտակը ստորագրելու ժամանակ Զաքարեն կենդանի չի եղել։ Թեև հրովարտակը կազմած է Զաքարեի և Իվանեի անունից, բայց հրովարտակի վերջում վկայություն տվող բոլոր անձինք հիշատակում են ոչ թե Զաքարեին իրեն, այլ Զաքարեի որդի Շահնշահին։ Թվականի սխալն առաջացել է տասնավորի Կ և Լ գրերը շփոթելուց։

Հաղբատի մեծ գավթի արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրայի 1210 թվականին պատկանող արձանագրությունից իմանում ենք, որ Զաքարեն Աշոցք և Հալալաշեն գյուղերը նախօրոք Հաղբատա վանքին է նվիրած եղել, բայց այդ գյուղերը հիշյալ վանքից հեռու գտնվելու պատճառով նրանից վերցրել է և տվել Շոթոռիկի որդի Դավթին և վերջինից ստացել է Հաղբ գյուղը և տվել Հաղբատին[1]։ Հետո էլ Հալալաշեն գյուղը գնել է Շոթոռիկի որդիներից և նվիրել Սանահնին։

Նույն Օքրոպիլ սարկավագի ձեռքով գրված մի այլ հրովարտակից իմանում ենք, որ Շահնշահը արդեն իր անունից Սանահնի վանքի վրա է հաստատում իր հոր՝ Զաքարեի և հորեղբոր՝ Իվանեի նվիրած գյուղերը և վերջում էլ իր կողմից, լրացուցիչ կերպով Սանահնի վանքին է նվիրում՝

...յՈւռնն՝ իւր ամէն սահմանաւն, զԽոշոռնի՝ լերամբ և դաշտով իւր ամէն սահմանաւն, (ի)զամուրն Ծորբթայ, զՇուլաւեր իւր ամեն սահմանաւն»[2]։

Հրովարտակի տակ իբրև վկա ստորագրել են նույն իշխանները, նույն հերթականությամբ, ինչ որ նախորդ հրովարտակի մեջ։ Հրովարտակը թվական չունի, բայց գրված է Ալեքսիս վարդապետի առաջնորդության ժամանակ, որի անունով արձանագրությունները պատկանում են 1240 (արձ. 53) և 1251—1256 (արձ. 114, 120) թվականներին։ Ուրեմն այս հրովարտակը պատկանում է 13-րդ դարի կեսերին և պետք է ասել, որ այդ ժամանակամիջոցում վանքի միաբանների թիվը ամենամեծն է եղել։

Մի քանի գիտնական վարդապետների մասին, մատենագրական ժլատ տեղեկություններից բացի, դժբախտաբար, միաբանների ներքին կենցաղի վերաբերյալ որևէ տեղեկություն չունենք, բայց ընդհանրապես, Սանահնի վանքը, ֆեոդալական Հայաստանի մտավոր ու արվեստի (մանրանկարների, ճարտարապետության, քանդակագործության) խոշոր կենտրոն լինելուց բացի, հայտնի է եղել նաև իր խստաբարո ճգնավորական կյանքով։ Նա մշտապես վայելել է սկզբում Բագրատունի թագավորների և նրանցից սերվող Կյուրիկյանների և հետագայում էլ, սկսած 12-րդ դարի վերջերից, Զաքարյանների և նրանցից սերվող Արղությանների հովանավորությունը, որոնք ամեն կերպ աշխատել են նյութապես ապահով վիճակ ստեղծել վանքի միաբանների համար՝ առատորեն կալվածքներ տալով վանքին և ընդառաջելով վանքի խոշոր շինարարական աշխատանքներին։

1215 թվականի մի խաչքարի թիկունքին գրված արձանագրությունից իմանում ենք, որ Համազասպանց Սմբատի որդի Սարգիսը, որ մեռել է շրջակա մահմեդական ամիրայությունների դեմ մղվող պատերազմի ժամանակ, թաղվել է վանքի բակում և վրան կանգնեցվել մի մեծ և գեղեցիկ խաչքար, որ Սարգսի խաչքար է կոչվում (նկ. 21)։ Նույն արձանագրության մեջ գրված է, որ Սարգսի համար նրա որդի Սմբատը և կինը՝ Աղուտը տվել են վանքին Մղարդ գյուղում գտնվող Արլաբասանց կալվածքն իր բոլոր շահով ու վնասով և 40 օրավար հող, իսկ փոխարենը վանքից ստացել են քառասնից տոնի պատարագները բոլոր եկեղեցիներում։ Դժբախտաբար այս գեղեցիկ խաչքարը կազմողի անունը հայտնի չէ, բայց այդ խաչ-

[1] Այս Հաղբ գյուղը ընկ. Ս. Պողոսյանի «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում» աշխատության մեջ Հաղպատ է դարձել, Կ. Կոստանյանցի «խալաշատ «Վիմական տարեգրի» պատճառով, էջ 289, 290։

[2] «Քոթուկ», էջ 62—68։